

ՔՈԱՖ-ի հոգաբարձուների խորհուրդը նոր նախագահ ունի

ԵՐԵՎԱՆ – Հայաստանի մանուկներ հիմնադրամի (ՔՈԱՖ) հոգաբարձուների խորհրդի նախագահ է նշանակվել «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռիչարդ Բեզջյանը:

«Պարոն Բեզջյանի առաջնորդությունն ու բացառիկ լիազորությունները մեր հիմնադրամի զարգացման հաջորդ փուլի բանալին են: Անհամբեր սպասում են Ռիչարդի հետ սերտ աշխատանքին՝ Հիմնադրամն ու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ նորարարական նախաձեռնությունը նոր մակարդակի բարձրացնելու՝ հանուն մեր գյուղերի երիտասարդների,- ասաց Հայաստանի մանուկներ հիմնադրամի հիմնադիր ու գործադիր տնօրեն Կարո Արմենը:- Հայաստանի գյուղերի հզորացումը երկրի տնտեսության շարժիչն են, բարգավաճման ու խաղաղ ապագայի գրավականը»:

Ռիչարդ Բեզջյանը երևանաբնակ գործարար է, ծրագրավորման ընկերությունների հիմնադիր ու ղեկավար: Գրաֆիկական դիզայնի, ինտեգրացված ծրագրային լուծումների, էլեկտրոնային առևտրի, իսկ այժմ նաև՝ բանկային ապահով լուծումների առաջամարտիկ է: ՔՈԱՖ-ի համար այսքան կարևոր ժամանակաշրջանում Ռիչարդ Բեզջյանի ներգրավվածությունն էլ ավելի նշանակալի է դարձնում իրադարձությունը, քանի որ նա տարբեր ոլորտներ և ուղղություններ առաջնորդելու մեծ փորձ ունի:

«Նորարարական մոտեցումը, ահռելի ջանքերն ու ֆինանսական ռեսուրսները, որ Հայաստանի մանուկներ հիմնադրամն ու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը ներդրել են գյուղական համայնքների զարգացման գործում, անզնահատելի են: Սա ուղենշային մոտեցում է, որ մի օր կորդեգրեն շատ երկրներ: Ինձ համար պատիվ է հոգաբարձուների խորհրդի նախագահությունը: Սա հնարավորություն է բարին գործել երեխաների, ընտանիքների, հայրենիքի ու աշխարհի համար»,- նշեց ՔՈԱՖ-ի նորանշանակ նախագահ Ռիչարդ Բեզջյանը:

Ռիչարդ Բեզջյանը կրթություն է ստացել ԱՄՆ Մասաչուսեթս նահանգում՝ Բոստոնի Հյուսիսարևելյան համալսարանի էլեկտրական ինժեներիայի ու համակարգչային դիզայնի բաժնում: Իր կարիերան նշանավորվում է շուրջ երեք տասնամյակի նորարարական գործունեությամբ, սկսած առաջին՝ Graphics Software ընկերությունից մինչև Հայաստանում 1990 թ. «Բումբերանգ» գիտահետազոտական կենտրոնի հիմնումը: Աձի հեռանկարները նկատի առնելով՝ 2007 թ. իր տիկնոջ՝ Ռուբինայի ու երեք երեխաների հետ տեղափոխվել է Հայաստան ու հիմնել «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ» (EGS) ընկերությունը:

Ունենալով շոշափելի հաջողություններ միջազգային շուկաներում՝ կազմակերպությունը վերածվել է Գերազանցության տեխնոլոգիական կենտրոնի, որն այսօր համարվում է Հայաստանում և տարածաշրջանում SS ոլորտում գործունեություն իրականացնող խոշորագույն կազմակերպություններից մեկը: Կենտրոնի թվով 300 բարձրակարգ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԳԻՄՆԱԴՐԱՄ

ծրագրավորողները նախագծում և մշակում են նոր ծրագրեր, և մատակարարում SS ծառայություններ աշխարհով մեկ:

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Ձեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

Առաջին ՍՄԱՐԹ կենտրոնը բացվել է Լոռու մարզում՝ ծառայելու տեղի շուրջ 150,000 բնակիչներին: